Der Verbindung der Begriffe „Salz“ und „schön“ oder „gut“ liegt die Anschauung vom magischen Charakter des Salzes zugrunde. Das Essen von „Salz und Brot“ besiegelt die Gastfreundschaft, dem Salz wird im Orient die Eigenschaft zugeschrieben, böse Geister zu vertreiben. Muß heute in Ägypten bösen Mächten ein Tier geschlachtet werden — so den *Zār*-Geistern die oft Frauen behexen und mit Krankheit schlagen — so darf das Opfer, ein Huhn oder ein Lamm, nur salzlos gegessen werden.

Im übrigen gibt jedes arabische Zauberbuch darüber Auskunft, in welchen Fällen man den Gebrauch von Salz zu vermeiden hat, wenn man mit Djinnen oder Scheiṭānen zu tun hat.

Der Schlüssel

„Schlüssel“ *բանալի banali* kommt von *բանալ banal* „öffnen“. Dagegen lateinisch *clavis* ist von *claudere* „zuschließen“ abgeleitet und hieher gehört noch homerisch κλῆις, irisch *clói*. Auch *Schlüssel* und *schließen* sind damit verwandt.

Im Orient wiegen jedoch die Ableitungen vom Verbum „öffnen“ vor.

Arabisch *miftāḥ* „Schlüssel“ kommt von *fataḥ* „er hat geöffnet“, auch berberisch *asaru* kommt von *ar* „öffnen“. *Banali* ist also ein Wort orientalischer Prägung.

Auch das Griechische hat ein solches Wort gebildet (*anoiktérion*), das als Lehnwort ins Türkische (*anahtar*) übergegangen ist.

Der Gefangene

Hiefür gebrauchen die Armenier *ձերբակալ dzerbakal* „der mit der Hand Ergriffene“, ein seltenes Beispiel einer Komposition mit einem Instrumental[6]. *Կալայ Kalay* = „ich habe gehalten, ich habe gehabt“. *Dzerbakal* ist die wörtliche Wiedergabe von sumerisch *šu-dib* „(mit der) Hand Gepackter“ und dieser Ausdruck war bis Kleinasien hin verbreitet, wo er hettitisch als *lú ŠU-DIB* belegt ist (J. Friedrich, Hettitisches Elementarbuch, Heidelberg 1940 § 371).

Die Bezeichnungen für den Gefangenen sind oft kulturhistorisch interessant. Ägyptisch *sqr ʿnḫ* „Lebender Erschlagener“ geht in eine Urzeit zurück, wo Feinde mit der Keule niedergeschmettert wurden, wie wir es auf unzähligen Reliefs sehen. Italienisch *cattivo*, aus lateinisch *captivus* bedeutet „schlecht“ und französisch *chétif* heißt „kümmerlich ernährt“, weil man Kriegsgefangene nicht besonders gut fütterte.

Ausblick

Die vorgetragenen Beispiele zeigen, daß das Armenische in vielen Fällen oriental sche Gedankenverbindungen übernommen hat. Es wurden aber nicht immer die Wörter als solche übernommen, sondern der Gedanke mit armenischem Wortmaterial nachgebildet.

[6] A Meillet: Altarmenisches Elementarbuch. Heidelberg 1913. § 32 a.

ՅՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ԶԵՌԱԳՐԱՑ ՆԻԿՈՍԻԱՅԻ Ի ԿԻՊՐՈՍ

(ԸՍՏԱՐ ՀՈԽԱԳՐՈՒԹԱՆ ԱՆԹԻԼԻԱՍ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ)

(Շարունակութիւն:)

Յա.

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Հին՝ Թ. 66: Ռ.ՃԻԷ = 1678:

ԹՈՒՂԹՔ՝ ....: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 34 × 25 հմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻՒԹ՝ մագաղաթ: — ԿԱԶՄ՝ ....: — ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ՆԿԱՐՔ՝ «մէջ ընդ մէջ սիրուն գունաւոր սրբոց նկարներ, մանաւանդ պատմութեանց ոմանց, սկիզբը դրուած խոշոր ծաղկենկարները շատ բնական եւ նուրբ գործեր են»: — ԳՐԻՉ՝ Յովհաննէս երէց: — ՏԵՂԻ՝ Կ. Պոլիս: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1678: Այս տեղեկութիւնները, ինչպէս նաեւ Յիշատակարանը առած եմ Դկտ. Նշանեանի ցուցակէն (տես Յառաջաբան):

Մատեանս է Յայսմաւուրք:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. «Մի միայն մի յիշատակարան ունի, որ շատ երկար է. սկիզբը գովեստ կը կարդայ սրբոց յարգանք ընծայողներուն, սուրբ Գրքէն օրինակներ բերելով...: Կ'օրինակենք միայն այն մասը, որ ձեռագրին համար կարեւոր է. «...վասն այնորիկ ցանկացող եղեալ բարեխաւսութեանն սրբոցն, աստուածասէր եւ տեառնահուպ բանի սպասաւոր Սարգիս վարդապետն, յորդորեաց եւ թելադրեաց հոգւով սրբով ի կէտ ժամանակի... զսոյ վերըն-ծայեաց ի դուռն սուրբ Մենաստանին ի ծովածոց կղզին ի Կիպրոս, ի սուրբ յանապատն երիցն երանեալ եւ երջանիկ սուրբ հօրն մեծին Մակարայ, յիշատակ հոգւոյ իւրում, եւ ծնողացն հանդերձ արեամբ մերձաւորացն եւ ըստացողին ընչիւք կարապետիս յԱփուչախ եւ մահտեսի Մարգարին, եւ ծնողացն Թորոսին եւ Խաթունին եւ կողակցուն մահտեսի Կեռասին, որդւոյն Ղուկասին եւ դստերն Հնազանդին եւ եղբարցն մահտեսի Բարդամին, եւ Զոպանին եւ Յովհաննէսին եւ քուրոչն, մեծ պապոցն եւ մամոցն ամենեցուն: Եղին յիշատակ ի դուռն մենաստանին, զի անջինջ մնասցէ յիշատակս այս մինչեւ ի գալուստն Քրիստոսի: Վերոյ գրեալ Սարգիս վարդապետս որ առաջնորդն էի սուրբ մենաստանիս եւ թելադրող տարին որ կոչի ճառ եւ երկանուամբ կոչի Յայսմաւուրք. աղաչեմք եւ հայցեմք, զի լի սրտիւ եւ բոլոր հաւատով յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր եւ ողորմի ասացէք վերոյգրեալ Սարգիս վարդապետի եւ մահտեսի Մարգարին. այլ եւ նզովիւք եւ կրկին կապանօք եւ զանլուծելի անիծովք անիծեալ... լիցի զսա թէ ծախեն, թէ գրաւ դնեն եւ կամ թէ գողանան. զդինն Յուդայի առցեն եւ զպատիժն Կայենին. այլ եւ սիրով պահօղքն պատուօղքն վարձս ի Քրիստոսէ առնեն, եւ անզրաւ փառս վայելեսցեն:

Արդ զրաւ եւ աւարտ սորա եղեւ աստուածապահ քաղաքն Բիւզանդիայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Սարգսի եկեղեցեացն, ի թվին Հայոց մեծաց Ռ.ՃԻԷ (1678), ամսեանն յունիսի Ա., ձեռամբ տկար եւ փծուն գրչի Յովանէս երիցու: Արդ երես անկեալ պաղատիմ հանդիպողացն յայսմ ծաղկաւէտ բուրաստանի, եւ հոգիազարդ մատենի, յիշել զվերոյգրեալ անունսն ի սէրն Քրիստոսի, ի ժամ աղօթիցն, զի թերեւս զմնացեալ եւ զլնացեալ յանցանսն որ ընդ մեզ, ջնջեսցի ձերոյին սուրբ մաղթանօքն եւ ողորմութեան ցողիկն անձրեւեսցի ի չարաւալի յոսկերս մեր, առ ի բուսուցանել յօրն աներեկի վերանստել ընդ Քրիստոսի: Զի եւ ինքն Քրիստոս զյիշողքդ՝ զյիշեցեալքս առ հասարակ արժանի արասցէ, երանաւէտ ձայնի ի փառս ամենազօր անուան իւրոյ: Եւ նմա փառք ընդ հօր իւրում եւ սուրբ հոգւոյն. ամէն: Դարձեալ աղաչեմ զձեզ՝ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զուսուցիչն իմ Կեսարացի զԱշատուր երէցն հանդերձ ծնողքն եւ ամենայն արեան մերձաւորքն. եւ Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ գալստեան. ամէն»:

Սարգիս վարդապետն է Զօլախ մականուանեալն, որ Մակարայ վանքին առաջնորդն էր. ծանօթ նաեւ այլուստ:

4.

ՃԱՌԸՆՏԻՐ — ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

ԺԳ.—ԺԴ. դար

ԹՈՒՂԹՔ՝ 549: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 33·5 × 25 հմ.: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ ի վերջ ձեռագրին 4 թուղթ: — ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ կազմալոյծ եւ տեղ տեղ ցեցակեր: Թղթեր ինկած: Նորոգողէն են թդ. 2բ—3ա, 8ա—13բ: — ԴԱՏԱՐԿ՝ 3բ, 13բ (կիսով): — ԳԻՐ՝ բոլորգիր մեծ եւ կանոնաւոր: — ԽՈՐԱՆ, ԿԻՍԱԽՈՐԱՆ, ՆԿԱՐ՝ չկան: — ԶԱՐԴԱԳԻՐՔ ԵՒ ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ միագոյն յաջող: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմրագիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԳ.—ԺԴ. դար: — ՏԵՂԻ՝ Ստիլիճի գիւղ (°): — ԳՐԻՉ՝ Ստեփանոս:

Մատեանս է Ա. մաս՝ ճառընտիր, Բ. մաս՝ Կիրակոս Արեւելցւոյ Յայսմաւուրքէն ընդարձակ քաղուածքներ: Սկիզբէն ինկած են թղթեր: Կը բովանդակէ.

Ա. մաս. ճառընտիր:

1. Թդ. 2—3ա (նորոգողի գրչէն). Յանկ բովանդակութեան Դ—ՃԿ:

2. բ. 4ա. Ի մեծի աւուր Յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ճրագալուցին: Երանելւոյն Սե(բեր)ղանոսի եպիսկոպոսի խաւսեցեալ ի մեծ քաղաքին Երուսաղէմի վասն հաւատոյ սուրբ Ծննդեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Ի մէջ քրիստոսասիրաց զՔրիստոսէ խոստացեալ ճառել...: Վջ. Անծնին Աստուծոյ Հաւր եւ ծնելոյն ի նմանէ Որդւոյն միածնի եւ սուրբ Հոգւոյն ելոյին ի նոցունց էութենէ, երիցն ի միութեան ամենայն փառք...:

Հրատ. Սեբերիանոսի ճառք, Վենետիկ 1830, էջ 1—7:

3. գ. 7բ. Ի մեծի աւուր Յայտնութեան: Երանելւոյն Գրիգորի Աստուածաբանի ասացեալ ի Ծնունդն եւ ի Յայտնութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Քրիստոս ծնեալ լինի. փառաւորեցէք...:

© National Library of Armenia

Այս ճառին չարունակութիւնն է 16ա—18բ, որ կ'աւարտի. «Երրորդութիւնն երկրպագեալ եւ փառաւորեալ. զոր եւ այժմ հաստատել ի մեզ մաղթեմք, որքան հասանելի է կապելոցս մարմնով ի Քրիստոս Յիսուս...: Հմմտ. Վիեննա, Թ. 217, թղ. 213ա:

4. Թղ. 14ա—15բ. (Յունուար Ա. Բաղոց ԻԴ. Տօն է եւ յիշատակ մեծին Բարսղի Կեսարու... եւ վարք նորա, զոր գրեաց Երանելին Ամփիլոքիոս Յիկոնիոյ եպիսկոպոսն...: Այս մեծ եւ սքանչելի այրս Աստուծոյ Բասիլիոս ի տղայութենէ անաւ...: Հմմտ. Վիեննա 7, 287ա. ց. 48): Վարքիս սկիզբն եւ կատարածը ինկած. նախնարար այս երկու թղթերը գրուած ըլլալու են վարուց սկզբնաւորութեան հետ որ կը պակսի, ձեռագրիս սկիզբը: Հատակոտորիս նիւթն է Ս. Բարսղի վարուց «վասն սրբոյն Եփրեմի Խորին Ասորւոյ» հատուածը, այժմ կը սկսի «զձեռնադրութիւն քահանայութեան, զի պատշաճ է քեզ...»: Հմմտ. Վարք եւ Վկայաբ. սրբոց, Վենետիկ 1874, Ա., 220—245:

5. դ. 18բ. Երրորդ աւուրն: Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդինուպաւլսի եպիսկոպոսապետի ի Մաթէոսի աւետարանին Մեկնութենէ: Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղէէմ յաւուրս Հերովդի արքայի...: Բազում աքնութեանց պէտք են եւ ստէպ ազաւթից...: Վջ. «զի զորս խնդրէինն դարին եւ եղեն հրեշտակք ճշմարտութեան...:

= Հրտ. Ոսկ. Մատթէի Մեկնութիւն, Ա., էջ 79—104:

6. Ե. 22բ. Դ. աւուրն: Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի Կ. Պ.ի եպիսկոպոսապետի յԱւետիս Կուսին Մարիամու Աստուածածնի: Դարձեալ խնդութեան աւետիս...: Վջ. Եւ սարսուցելոց հզաւր սիրոյ ծածկոյթ, քանզի նա է խաղաղութիւն մեր. յորում լիցի...:

= Հրտ. Յովհ. Ոսկեբերանի Մեկնութիւն Թղթոցն Պաւղոսի, Բ., 634—639:

7. զ. 25բ—27բ. Ե. աւուրն: Տեառն Զաքարիայ Հայոց կաթողիկոսի ասացեալ յԱւետիս Աստուածածնին եւ միշտ Կուսին Մարիամու: Տէր Յիսուս Քրիստոս ի գիշերին յորում մատնէր զինքն վասն կենսագործութեան ազգի մարդկան...: Վջ. Առ կոյս մի, ասէ, խաւսեցեալ առն. քանզի մաք |||| շարունակութիւնը պակաս, թուղթ մ'ինկած ըլլալով:

8. Թղ. 28ա. (Զ. աւր. ի Վարդապետութենէ սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի: Իբրեւ լցան աւուրք ութ թլփատել զնա... զոր եւ մարգարէն ասէր...): Ճառիս սկզբնաւորութիւնը չկայ թուղթ ինկած ըլլալով. այժմ ունինք վերջաւորութիւնն միայն. «Արդ բացեալ երկնից եւ հայր աղաղակէ թէ Դա է որդի իմ սիրելի... այլ այսու լուսով եղեւ աշխարհս. եւ զնա ոչ ծանեաւ. արդ վասն այսորիկ իսկ եկեալ, զի ի միտ ածցեն զլոյսն նորա եւ որդիք Աստուծոյ լիցին:

= Ագաթ., էջ 200, 6—210, 14:

9. ժ. 28ա. Վկայաբանութիւն սրբոցն Պետրոսի Ալեքսանդրու եպիսկոպոսի եւ Արիսոդ(ոմայ սարկաւագի): Ի թագաւորութեանն Դիոկղետիանոսի կայսեր Հովմայեցւոց...: Վջ. այսպէս կատարեցաւ սուրբ հայրապետն ի փառս ամենասուրբ Երրորդութեան... (Վիեննա, Թ. 1, 60ա):

10. ժա. 34բ—38ա, 43—48բ. Ի յիշատակի սրբոյն Անտոնի խաչակրաւն միայնաւորի. Պատմութիւն վարուց նորին: Բարիոք է նախանձ առաքինութեան զնել ընդ միայնաւորս...: Վջ. եւ որք ծառայենն նմա մինչեւ ի վախճան ասէն յայտնեալս եւ բարձրացեալս ցուցանէ...: Թղթերու եռեւառաջութիւն տեղի ունեցած է 38ա—48բ: Անտոնի վարքին կից պէտք է ըլլայ յաջորդս:

= Հրտ. Վարք Հարանց, Ա., 16—80:

11. Թղ. 39ա. Հանդիսա երանելոյն Անտոնի: Զաւրագլխի որումն բազմաւք աղաչեցեալ զերանելին Անտոնիոս... չարունակութիւնն 38ա:

12. ժբ. 38բ. Վարք սրբոյն Պաւղոսի անապատականի: Առ բազումս բազում անգամ խնդիր լինէր...: Վջ. (48ա) Արդ աղաչեմ զամենայն ոք որ ընթեռնուցու զայս, զՅերոնիմոս զմեղաւոր յիշել... հանդերձ պատուոյ նոցա:

= Հրտ. Վարք Հարանց, Ա., 1—16:

13. ժզ. 48ա. Ի յիշատակի մեծի թագաւորին Թէոդոսի: Երանելոյն Եւսեբի Էպիսկոպոսի յեկեղեցական Պատմութենէ, յԹ. գլրութենէ: Այսպէս իբրեւ եկաց Կոստանդիանոս, այն որ ասացաք զնմանէ...: Վջ. միով խորհրդովք եւ միով կամաւք:

= Եւսեբիոս, Եկեղ. Պատմ. Թ. 9—11, էջ 693—698:

14. Թղ. 50ա—52ա. ՅԱգաթանգեղայ Պատմութենէ: Ընդ ժամանակս ընդ այնոսիկ թագաւորեաց Կոստանդիանոս...: Վջ. ի հանդուսարանս սրբոյն:

= Ագաթ. 455, տ. 11—464, տ. 11:

15. Թղ. 52ա. Յաղագս թագաւորելոյն Թէոդոսի մեծի եւ ժողովոյն որ եղեւ վասն հոգեմարտ(ից): Բայց Վաղէս կայսր ըստ արժանի խորհրդոյն...: Վջ. զՄակեդոնն եւ զամենայն հոգեմարտսն:

= Մ. Խորենացի, Գ., 33:

16. Թղ. 52բ. Ի կայսերաց գրոց: Թէոդոս որդի Գրատիանոսի թագաւորեաց ամս ԺԵ...: Վջ. եւ զարձեալ ննջեցին:

= Անանուն ժամանակագրութիւն. Վենետիկ 1904, էջ 55—56:

17. ժդ. 53ա. Խաւսք երանելոյն Եփրեմի Խորին Ասորւոյ Ներբողեան պատմագրաբար ասացեալ ի սուրբն Յովհաննէս Կարապետ եւ մկրտիչ Քրիստոսի եւ ի կաքաւուն Հերովդիադայ: Հրաւիրելով կոչեցաւ լեզու իմ...: Վջ. վասն զի ազատեալ է յանցանաւք:

= Հրտ. Մատենագրութիւնք Եփրեմի, Դ., 129—142:

18. Թղ. 60ա. Տեառն Գրիգորի Արծրունեաց եպիսկոպոսի թուղթ վասն Տեառնընդառաջին ի Հայս: Ի ժամանակս Յուստինիանոսի կայսեր, յերեսներորդ ամի թագաւորութեանն նորա էր խաղաղութիւն ի քաղաքին յԵրուսաղէմ...: Վջ. ընդ առաջ ելեալ մաքրութեամբ եւ արդարութեամբ ժառանգեսցուք զերկնից արքայութիւնն...(Վիեննա, 1, 95բ. Յուց., էջ 3):

19. Թղ. 62բ. Երանելոյն Կիւրղի եպիսկոպոսապետի Աղեքսանդրու ի Մեկնութենէ Աւետարանին որ ըստ Ղուկաս: Իբրեւ լցան աւուրք սրբութեան նոցա...: Ով մեծ եւ սքանչելի տնաւրէնութեանս...: Վջ. զի փառաւորեսցուք զնա որպէս փրկիչ եւ որպէս զԱստուած եւ զՏէր եւ զապրեցուցիչ. որով եւ ընդ որում Աստուծոյ Հաւր փառք...:

20. ժզ. 65ա. Երանելոյն Եփրեմի ասացեալ յաղագս Ներսեհացւոց: Ահա հրաման հասեալ առ մարդարէն Յովհան...: Վջ. Արդ ի վերայ այսր ամենայնի մատուցցուք գոհութիւն ի փառս...:

= Հրտ. Մատենագրութիւնք, Դ., 107—124:

21. ժէ. 74ա. Թուղթ առ ի Ներսեհ եպիսկոպոսապետէ յեղբարէ տեառն Գրիգորի կաթողիկոսի Հայոց եւ պատասխանի գրի կաթողիկոսի Հայոց եւ պատասխանի թղթոյ նորին ի Գէորգեայ եպիսկոպոսէ արեւելեան, առաջնորդի սրբոյ ուխտին Հաղբատայ յաղագս հետապատելոյ առ ի ստուգել զպատմութիւնս երանելոյն սրբոյն Սարգսի: Որոց բաղձալի է ճշմարտութիւնն յիրս եւ ի բանս...: Վջ. որ է այսպէս:

= Հրտ. Սոփերք, ԺԶ., 4—9:

22. Թղ. 75բ. Վկայաբանութիւն սրբոյն Սարգսի զաւրավարի եւ որդւոյ նորա Մարտիրոսի եւ այլ զինուորաց որք ընդ նոսա վկայեցին յաւուրս ամբարիշտ թագաւորացն Յունաց եւ Պարսից՝ Յուլիանոսի եւ Շապհոյ: Ի ժամանակս թագաւորութեանն Հռովմայեցւոց...: Վջ. «թարգմանեցաւ ճառս յԱսորւոյն ի մերս ի ձեռն Միխայլի որումն կրաւնաւոր քահանայի ասորւոյ. եւ յարմարեցաւ ըստ կարի մերումս լեզուի շարադրութեամբ ի Ներսեհէ կաթողիկոսէ յեղբարէ Գրիգորիսի կաթողիկոսի, ի թուականիս Հայոց ՈԷ (1158): Որովք մաղթեմք զընթերցողդ...:

= Հրտ. Սոփերք, ԺԶ., 1—53:

23. ժէ. 86ա. Երանելոյն Կիւրղի Երուսաղէմի հայրապետի վասն Յարութեան մեռելոց: Արմատք ամենայն բարեգործութեան յոյսն յարութեան...: Վջ. «զի յերեւելոյս հաւատարիմ լիցի հանդերձեալն:

= Հրտ. Կիւրղի Կոչումն Ընծայութեան, Վիեննա 1832, էջ 398—414:

24. ժբ. 92բ. Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանին յաղագս ոչ սպալոյ զվախճանեալսն որ ապագայ գնան յաշխարհէ: Բեր այսուհետեւ մանաւանդ քան զյառաջագունեցն փութարար վարդապետութեամբ մըցուք ի ներքս...: Վջ. Որպէս երբեմն Աբրահամ զիսահակ...:

= Հրտ. Ոսկ. Պաւղ., Բ., 770—782:

25. ժբ. Թղ. 95ա. Նորին երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի վասն մխիթարութեան սգաւորաց: Քրիստոս եառ, երկրպագեսցուք ստեղծչին. վերստին ստեղծ...: Վջ. վասն կամայից եւ ակամայից. բայց միայն ապաւինել ի մարդասիրութիւնն Աստուծոյ... (Հմմտ. Վիեննա, 1, 123ա):

26. ժբ. Թղ. 97բ. Ագուհացիցն բուն Բարեկենդանին Ա. Կիւրակէին: Երանելոյն Բարսղի Կեսարու Կապպադովկացւոց եպիսկոպոսի ասացեալ: Փոդեցէք, ասէ, ի նոր ամսեան փոդով ի բարենչան աւուր տաւնի մերոյ: Այս հրաման մարգարէական մեզ...: Վջ. յարդար դատաւորութեանն Քրիստոսի.. (Հմմտ. Վիեննա, 1, 158բ):

27. Ի. Թղ. 95ա. Պատմութիւն սրբոյն Թէոդորոսի զաւրավարի ծննդեանն եւ սնը-

© National Library of Armenia

դեանն եւ վարուցն։ Ի ժամանակին յորում Մակեդոնացին Աղեքսանդրոս...։

Բ. Թղ. 96բ. Վկայաբանութիւն սրբոյն Թէոդորոսի զաւրավարին։ Մաքսիմիանոս եւ Մաքսինտոս թագաւորք առաքեցին յամենայն թագաւորութիւնս...։ Վջ. կատարեցաւ սուրբ վկայն Թէոդորոս ի յերկրորդում աւուր յունիս ամսոյ ի թագաւորութեանն Մաքսիմիանոսի եւ Մաքսինտու...։

= Հրտ. ա. եւ բ. Սոփերք, ԺԶ., 63—80։

28. իա. Թղ. 100բ. Աղուհացիցն Բ. Կիւրակէին։ Երանելւոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպալսի եպիսկոպոսի յաղագս Ապաշխարութեան։ Տեսէք յառաջնումն Կիւրակէին զպատերազմն եւ զյաղթութիւնն...։ Վջ. ահա տեսեր զիարդ ի տրամութենէն ջնջին մեղք։

= Հրտ. Ոսկ. Ճառք, 46—56։

29. իբ. 105ա. Բ. չարաթն աւրն աղուհացիցն։ Վկայաբանութիւն սրբոյն Կիւրղի Երուսաղէմի հայրապետի։ Միածին որդին եւ բանն Աստուած, որ յառաջ քան զյաւիտեանս ի հաւրէ ծնեալ...։ Վջ. եւ ամենեքին զոհանալով աւրհնէին զամենասուրբ Երրորդութիւնն...։

Հրտ. Հանդ. Ամս. 1948, էջ 145—155։

30. իգ. 109բ. Գ. Կիր. աղուհացիցն։ Երանելւոյն Սեբերիանոսի եպիսկոպոսի ասացեալ յաղագս յԱւետարանին Մեկ։ Այր մի ելանէր յերուսաղեմէ յԵրիքով...։ Արդ յորժամ արար Աստուած զերկին եւ զերկիր եւ զմարդն...։ Վջ. յայնժամ ապա կատարեսցուք զպատուիրանն Քրիստոսի. եւ յայսմ ամենայնի փառաւորեսցուք...։

= Հրտ. Ճառք Սեբերիանոսի, Վենետ. 1830, էջ 202—204։

31. իդ. 111ա. Տեառն Յոհաննու Ոսկեբերանի ի կինն մեղաւոր որ առն զՏէրն իւղով։ Սովորութիւն է աշխարհական երաժշտութեանց փողովք եւ քնարիւք...։ Վջ. եւ բացցի նմա յարարչէն ամենեցուն...։

= Հրտ. Ոսկ. Պաւղ., Բ., 854—861։

32. իե. 115ա. Դ. չարաթն աւրն աղուհացիցն։ Յովհաննու Երուսաղէմի հայրապետի յիշատակ։ Երանելւոյն Եւսեբի ժամանակագրի յեկեղեցական Պատմութենէ։ Ընդ ժամանակս յայտնի էր եպիսկոպոս յեկեղեցւոջն Երուսաղէմի Նարկիսոս...։ Վջ. քանզի պիտոյ էին՝ կարգեցաք զանուանս նոցա։

= Եւսեբ. Եկեղ. Պատմ., Ե., 12 (էջ 367)։

Բ. 115բ. Ի նոյն գրոց յաղագս սքանչելեացն Նարկիսեայ. ի Զ. Դպր.։ Այլ սքանչելիս բազումս իբր ի տեսչութենէ...։ Վջ. եկաց զկնի նորա յեկեղեցւոջն նոցա Փերիոս։

= Եւս. Եկ. Պատմ., Զ., 9—11 (էջ 438—442)։

33. Թղ. 117բ. Ի յիշատակի Յովհաննու Երուսաղէմի հայրապետի ի Պատմութենէն Եպիփանու։ Եւ եղեւ երբեմն զի սարկաւագ ոմն եկն յերուսաղէմէ առ Եպիփան...։ Վջ. հանգեաւ ի Քրիստոս բարի վարուք։...։

34. իէ. 119ա. Դ. Կիր. աղուհացիցն։ Եր. Յովհաննու Կոստանդինուպալսի եպիսկոպոսի ոսկեբերանի ասացեալ։ Տեսէք զԱստուծոյ զաւրութիւնն. տեսէք եւ զԱստուծոյ մարդասիրութիւնն...։ Վջ. յետ աստի վախճանին ի գոգ հայրապետին Աբրահամու հանդչէր...։

= Հրտ. Ոսկեր. Ճառք, 46—56։

35. իը. 123բ. Աղուհացիցն Ե. չարաթն աւրն։ Սրբոց Քառասնիցն որք ի Սեբաստիա կատարեցան։ Ընդ ժամանակս Լիկիանեայ թագաւորի...։ Վջ. եւ յիշատակ յաչխարհի թողին ի փրկութիւն ամենայն հաւատացելոց...։

= Հրտ. Վարք եւ Վկայաբ., Բ., 506—514։

36. իթ. 128բ. Աղուհացիցն Ե. Կիր.։ Եր. Յովհաննու Ոսկեբերանի ի Փարիսեցին եւ ի Մաքսաւորն։ Զփարիսեցին եւ զմաքսաւորն յիշեցաք եւ երկուս կաս բանիւ լծեալ...։ Վջ. եւ հանդերձ նովաւ զամենայնն շահեսցուք ի Քրիստոս Յիսուս...։

= Հրտ. Ոսկ. Ճառք, 323—338։

37. Թղ. 129բ. Նորին Յովհաննու Ոսկեբերանի ի նոյն գրոց։ Երրորդ եւս ճանապարհ ապաշխարութեան. զի ի բազմութենէ ճանապարհացն դիւրին լիցի քեզ գիրկութիւն գտանել...։ Վջ. ընդ ճշմարիտ արդարոն փառաւորեսցուք զՀայր...։

= Հմմտ. Վիեննա, 4, 34ա։ Ճառս մէկ մասն է Յովհ. Ոսկեբերանի Յաղագս ապաշխարութեան ճառին։ Տեսէք յառաջնումն Կիւրակէին...»։ Հրտ. Ճառք, էջ 53—56։

38. լ. 131բ. Աղուհացիցն Զ. չարաթն աւրն։ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին յԱգաթանգեղայ Պատմութենէն։ Ընդ նուազել ժամանակաց թագաւորութեանն Պարթեւաց...։ Վջ. զաւրացաւ ի վերայ սահմանաց նորա։

= Ագաթ. 15, 1—24, 17։

Բ. 136բ. Վկայաբանութիւն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին։ Յառաջին ամէն Տրդատայ արքայութեանն Հայոց խաղացին եկին...։ Վջ. ողջ լերուք. եւ մեք մեզէն իսկ ողջ եմք։ (Գրիգորի Աղօթքին սա պարբերութեան կից՝ «սիրեցեր դու զստեղծուածս ձեռաց քոց» կը ծանօթագրէ գրիչը. «ով իմաստուն ընթերցաւղք, մի մեղադրէք զի մեծ է աղաւթքն. ես համառաւտեցի. ով երկարն ուզենա թող ի յայլ աւրինակէ գրէ»։ կը շարունակէ. «Եւ արդ Տէր բարերար որ եկիր...։

= Ագաթ. 30, 1 եւ շար.։

39. լա. 146բ. Աղուհացից Զ. Կիր.։ Եր. Յովհաննու Ոսկեբերանի ի Զաքէոս մաքսաւորն ասացեալ յԱւետարանին Մեկ։ Որք բարեացն են ցանկացաւղք...։ Վջ. արդարութեան պսակն, զոր կազմեսցէ Քրիստոս սրբովքն եւ անթառում ծաղկաւքն...։

= Հրտ. Ոսկ. Պաւղ., Բ., 734—738։

40. լբ. 149ա. Եր. Յովհ. Ոսկեբերանի յաղագս Ապաշխարութեան։ Բազում ինչ է որ կրէ զբրիստոնէութիւն մանաւանդ քան զամենայն ինչ սէր...։ Վջ. եւ լինի այս ի մեծի աւուրն յանդիմանութեան առաջի Քրիստոսի եւ անչափ բազմութեանն...։

= Ճառս Պարիսի Թ. 116, 186բ—188բ կը սկսի. Բազմութիւնք քրիստոսասէր ժողովոց բազում ինչ ունին որ կրեն զբրիստոնէութիւն...։

41. լգ. 151բ. Աղուհացիցն Է. չարաթն աւրն։ Գալուստն Տեառն ի Բեթանիա եւ Ղազարն։ Եր. Եփրեմի խորին ասորւոյ ի Ե. Թարգմանութենէ։ Յորժամ երիտասարդն էիր, պարտ էր քեզ զաներեւոյթն խորհել...։ Վջ. զի զթած եւ ողորմած, երկայնամիտ եւ բազում ողորմ է Տէր Աստուած մեր...։

= Հրտ. Ոսկ. Պաւղ., Բ., 861—864։

42. Թղ. 153բ. Հարցումն Թէոդորոսի քահանայի ընդ երանելին Եպիփան վասն Քառասներորդ պահոց պասեքին։ Եթէ Մովսէս Ի. աւր պահեաց եւ Եղիա եւ Տէրն մեր...։ (Ի մէջ այլոց կ'ըսուի. «Այսպէս կարգեաց սուրբն Գրիգոր Հայոց հայրապետն ոչ ադարտելով զաւրէնս կամ զմարգարէս...»)։ Վջ. թէ) ուր են եմ, անդ եւ պաշտպանեայն իմ եղիցի...։

43. լդ. 155բ. Եր. արբաս Եփրեմի խորին ասորւոյ ի գալուստն Փրկչին յերուսաղէմ եւ ի սուրբ տաւն բարեբանութեան։ Ի տաւնս տաւնից լի ընտրողութեամբ հրաւիրեալ էք...։ Վջ. տաւնեա զտաւնս փրկչին որ եկն փրկեաց զքեզ ի մոլորութենէն...։

= Հրտ. Եփրեմ, Դ., 45—60։

44. լե. 164բ. Մեծի չարաթուն Երկչաբաթն աւրն։ Սրբոյն Յովհ. Ոսկեբերանի Կոստանդինուպալսի եպիսկոպոսապետի յԱրարածոց Մեկնութենէ յայրն եւ կինն, յԱդամ եւ յԵւա։ Եւ եւս կինն զի բարի է ծառն ի տեսանել եւ քաղցր ի կերակուր...։ Տեսանե՞ս կերակուր որ զմահ միջնորդեաց. տեսանե՞ս կերակուր որ ի դժոխս ձգիցէ...։ Վջ. կալցուք մինչեւ ցայս վայր զբանս եւ զԱստուած փառաւորեսցուք...։

= Հմմտ. Վենետ. 212, 363բ եւ այլն։

45. լզ. 168բ. Մեծի աւուր Երեքշաբաթին։ Եր. Յովհ. Ոսկեբերանի յաղագս Կուսանացն ասացեալ յԱնհասից գրոց։ Յորժամ զմտաւ ածեմ զդիւրածախումն կենցաղոյս...։ Վջ. արդ արացուք, եղբարք, զպատուիրանս զայս, զի խոստացելոց բարեացն...։

= Հրտ. Ոսկ. Պաւղ., Բ., 744—750։

46. լէ. 172ա. Մեծի Դշին։ Եր. Յովհ. Ոսկեբերանի... ի Մաթէոսի աւետարանին Մեկնութենէ։ Յայնժամ չոգաւ մի ոմն յերկոտասանիցն Յուդա Սկարիովտացի...։ Յայնժամ. ե՞բր. յորժամ զայս ասաց...։ Վջ. զի եւ ասա ի դիւրութեան լինելիսն եւ ի յաւիտենական կեանսն եւ յանծաւխ գանձսն վայելելիսն...։

= Ոսկ. Մատթ. Մեկնութիւն ճառ ՁԱ. Montfaucon VII, 762—772։

47. Թղ. 174բ. Եր. Եւսեբի եպիսկոպոսի ի նոյն խորհուրդ։ Փութասցուք ի Խաչն Քրիստոսի. ոչ զի խաչ երանիցեմք...։ Վջ. որ եղեւ կեանք արարածոց ի Քրիստոս Յիսուս...։

= Հրտ. Սեբերիանոսի ճառք, էջ 219—221։

48. լը. 176ա. Մեծի Եչին։ Եր. Զենորայ եպիսկոպոսի ասացեալ ի հին գատկին։ Յետ խաւսելոյն Յուդայի ընդ քահանայապետն...։ Վջ. ի փրկութիւն աշխարհի եւ ի կենդանութիւն հոգւոց մերոց։

= Հրտ. Բազմավէպ, 1922, էջ 225—228։

49. Թղ. 178ա. Եր. Յովհաննու Ոսկեբերանի ի Մատթէոսի աւետարանին Մեկնութենէ։ Յառաջնում աւուր բաղարջակերացն...։ Առաջին բաղարջակերաց. յառաջ քան զբաղարջակերաց աւրէն ասէ. զի սովոր են յերեկորէն թուել...։ Վջ. այլ իբրեւ ի մո-

© National Library of Armenia

լորութենէ իմիքէ ըմբռնեալ յարձաթսիրութենէն:

= Հրա. Ոսկ. Մատթ. Գ. 97—102:

50. Լբ. 182ա. Մեծի աւուր Ուրբաթին: Տեառն Զաքարիայ Հայոց կաթողիկոսի ասացեալ ի Զարշարանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Երէկ զմեծի եւ զհրաշափառ հինգշաբաթուն զհոյակապ եւ զխորհրդածութեան աւր տաւնախմբել արժանաւորեցաք. ընկալ զպարգեւս շնորհատու Հոգւոյն սրբոյ...: Վջ. պարագրելի մարմինն չարչարեցաւ:

51. Թղ. 192բ. Եր. Եւսեբի Եմեսու եպիսկոպոսի ի Զարշարանն Քրիստոսի: Իսկ զչարշարանացն Քրիստոսի լուել ոչ պարտիմք...: Վջ. այլ նոքա կրեցին պատիժս. եւ եկեղեցի պարծի ի Քրիստոս Յիսուս...:

= Հրա. Ճառք Սեբեբիանոսի, էջ 212—218:

52. Խ. 196բ. Մեծի աւուր Թաղմանն Տեառն: Կիւրղի եպիսկոպոսի ասացեալ Երուսաղէմացւոյ: Եկն Քրիստոս եւ երարձ զմեղս մեր եւ եդ ի վերայ խաչին...: Վջ. զի պահէին զունայնութիւն եւ զտատիպութիւն իւրեանց թողին:

= Հրա. Կիւրղի Կոչումն Ընծայութեան, էջ 264 եւ շար.:

53. Թղ. 199բ. Սրբոյն Եղիշէի վարդապետի ի Թաղումն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եկն, ասէ, Յովսէփ Արիմաթացի...: Իբրեւ լսես զհամարձակեցեալն, մի զուգնաքեայ համարեսցիս...: Վջ. էջ եւ բարձրացաւ ի փոքր տեղւոջ. եւ արժանաւորս արար աւրհնել զտէրութիւնն Հաւր...:

= Հրա. Եղիշէի մատենագրութիւնք, Վենետիկ 1859, էջ 292—300:

54. Խա. 204բ. Եր. Գրիգորի Աստուածաբանի Նազիանզու եպիսկոպոսի ի Պասքա եւ ի հեղգութիւն: Յարութեան աւր. եւ սկիզբն այոզակ...: Վջ. մի լեալ զամենեսեան ի Քրիստոս Յիսուս այժմ եւ որ անդ են հանդիստքն...:

55. Թղ. 206ա. Եր. Դիոնեսիոսի եպիսկոպոսապետի ի Աղեքսանդրու ի Յարութիւն Փրկչին: Յարեաւ այսաւր ի մեռելոց Քրիստոս կենդանին յաւիտենից. եւ տեսեալ կանանցն զյարութիւն նորա...: Վջ. ի ձեռն առաքելոցն քարոզեցաւ...:

= Հրա. Pitra-Martin, Analecta Sacra Spic. Solesmensi, IV, 180—181:

56. Թղ. 207բ. Եր. Յովհ. Ոսկերերանի.. ի սուրբ Զատիկն: Պայծառ է զատիկս ժողովս եւ մեծապատիւ է տաւնս...: Վջ. այլ զէմ յանդիման ընդ ամենայն սուրբս նորա...

= Հրա. Ոսկերերանի Ճառք, էջ 26—45:

57. Թղ. 209բ. Ս. Կիւրղի Աղեքսանդրու հայրապետի: Արդ պահելով զաւրս յորում մատնեցաւ...: Վջ. եւ երեւին ստուգիւ հասու առնել իւրաքանչիւր ոք ի սրբոց աւետարանչացն:

58. Թղ. 211ա. Յովհ. Ոսկերերանի ի Յարութիւնն Տեառն: Իսկ Թովմաս մի յերկոտասանիցն...: Զոր աւրինակ պարզարար եւ որպէս դիպեցաւ հաւատալն զիւրութեամբ: Վջ. երանեցէք զնոսա... որք հանդերձեալ էին լինել ընդ նմա ըստ մերում հասարակաց յարութեանն...:

= Յովհ. Ոսկերերանի Մեկնութիւն Յովհաննու Կ. Պոլիս 1717, էջ 989—998:

59. Թղ. 213բ. Եր. Եփրեմի խորին ասորւոյ ի Յարութիւն Փրկչին: Յաւուր յորում յարեաւ Քրիստոս եւ լուծաւ զոզուն յաչակերտսն...: Վջ. զի զուցէ լիսեցուսցէ զաւելի ըմպաւղսն...:

= Եփրեմ, Դ., 61—62:

60. Խբ. 214բ. Նոր Կիրակէին: Եր. Յովհ. Ոսկերերանի... ի թերահաւատութիւնն Թովմայի: Ահա դարձեալ տաւն, ահա դարձեալ փրկութիւն ոգւոց վայելչապէս...: Վջ. Մի արհամարհանաւք մերձեսցուք առ նա, այլ սրբութեամբ...:

= Հրա. Ոսկ. Պաւղ., Բ., 750—757:

61. Խգ. ...ի մեծի աւուր Համբարձման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ի վարդապետութենէ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի: Եւ իբրեւ կատարեաց զուխտադրութիւնն Աստուծոյ վասն հրէական ազգին...: Վջ. զաւրինակ միւսանգամ զաղտեանն Քրիստոսի:

= Ագաթ. 245, 18—247, 18:

62. Թղ. 219բ. Ս. Կիւրղի Երուսաղէմի հայրապետի ի Համբարձումն Տեառն: Արդ զընթացսն համբերութեամբ կատարեաց Տէր մեր Յիսուս Քրիստոս...: Վջ. եւ դարձեալ զայ թագաւորեալ յաւիտեանս. ամէն:

= Հմմտ. Կիւրղի Կոչումն Ընծ., էջ 294 եւ շար.: Նոյնը ունինք Պարիսի Թ. 110, 431ա—432բ: 115, 79ա, Վենետիկ 202, 417ա—418ա. այլ եւ այլ խմբագրութեամբ:

63. Թղ. 220բ. Եր. Դիոնեսիոսի եպիսկոպոսի ասացեալ: Եհան Յիսուս զաշակերտսն

մինչեւ ի Բեթանիա...: Զայս կանխաւ գուշակեաց երանելին Դաւիթ...: Վջ. անրաժանելի միաւորութեամբն. որում փառք...:

= Հրա. Pitra, Analecta Sacra, IV, 180—181:

64. Խդ. 221ա. Ի մեծի աւուր Պենտակոստէին: Եր. Գրիգորի Աստուածաբանի յաղագս Հոգւոյն սրբոյ: Յաղագս տաւնիս զուգնաքեայ խմաստասիրեսցուք...: Վջ. ի նոյն ինքն ի բուն եւ յԱստուած...:

65. Թղ. 224բ. Ս. Կիւրղի Երուսաղէմի հայրապետի ի Հոգին սուրբ: Շնորհք հոգեւորք են ճշմարտիւ...: Վջ. առ ընդունելութիւն երկնաւոր շնորհացն:

= Հրա. Կոչումն Ընծայութեան, էջ 336 եւ շար.:

66. Խե. 227ա. Յաղագս սրբոյ Տապանակին որ ի Կարիաթարիմ յԱ. Թագաւորութենէն: Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ժողովէին այլազգիքն ի վերայ Իսրայէլի...: Վջ. Եւ տաւնն առ հասարակ լի լինէր ամպով եւ փառօք Տեառն... (Ա. Թագ. Գ—Է եւ Գ. Թագ. Ը):

67. Խզ. 229ա. Եր. սուրբ հաւր մերոյ Մովսիսի քերթողահաւր յաղագս Վարդավառի խորհրդոյ: Լուսաւոր եւ պայծառ են վառք մերձաւոր տաւնիս...: Վջ. ընդ թագաւորեալսն ի լոյս ի նոյն ինքն ի Քրիստոս...:

= Հրա. Մ. Խորենացւոյ մատենագրութիւնք, Վենետիկ 1865, էջ 326—338:

68. Խէ. 236բ. Տեառն Զաքարեայ Հայոց կաթողիկոսի ի Ննջումն Աստուածածնին: Հնգետասաներորդ ամաց էր ամէներջանիկ Մարիամ, յորժամ ծնաւ զմարմնացեալ Բանն Աստուած...:

69. Թղ. 239բ. Դիոնեսիոսի Արիսպագացւոյ Աթենացւոյ առաջին եպիսկոպոսի Պատասխանի հարցմանն Տիտոսի Կրետացւոյ եպիսկոպոսի յաղագս Ննջման սուրբ Կուսին: Ծանիցէ եղբայրութիւնդ քո, ով վեհմականդ Տիտէ...: Վջ. մինչեւ ի ժամանակի հաստատման:

= Հրա. Սրուանձտեանց, Հնոց եւ նորոց, Կ. Պոլիս 1874, էջ 110—115:

70. Խբ. 240բ. Շողակաթին: Տեսիլ զոր ետես սուրբն Գրիգոր վասն հիմնարկութեան կաթողիկէ Եկեղեցւոյ: Արդ ի ինուլ վաթսնեւորդ վեցերորդ աւուրն՝ ընդ այգուն առաւաւտանալն մատուցեալ իշխանքն...: Վջ. զի մի ոք... ի բժշկութենէն գրկեսցի:

= Ագաթ. 378—394:

71. Խթ. 246բ. Ի նաւակատիս սուրբ կաթողիկէ Եկեղեցւոյ. որ կատարի յԵրուսաղէմ ի սուրբ տեղիսն: Սրբոյն Կիւրղի Երուսաղէմի հայրապետի. Յաղագս սուրբ եւ կաթուղիկէ եկեղեցւոյ մարթ եւ պատշաճ բազում ինչ ասել...: Վջ. վասն որոյ զամենայն ջանս ջանասցուք զի ի Տեառնէ Աստուծոյ վայելեսցուք զկեանսն...:

= Հրա. Կոչումն Ընծայութեան, էջ 416 եւ շար.:

72. Ծ. 248ա. Սրբոյն Սահակայ Հայոց կաթողիկոսի թէ որպէս հաստատեցաւ կարգ եկեղեցւոյ եւ որոշումն վանաց: Հաւատք եկեղեցականք զարթուցանեն զմիտս երկիւղածաց Քրիստոսի...: Վջ. եւ որք կամին հակառակել՝ անձանց զատաստանս ընդունին...:

= Հմմտ. Սոփերք, Բ., 100 եւ շար.:

73. ծա. 250ա. Վերլուծութիւն կաթողիկէ եկեղեցւոյ եւ որ ի նմա յաւելեալ կարգք: Երանելին Պաւղոս գրէ Եբրայեցւոցն այսպէս ասելով. Սաւուր հանդերձելոց...: Վջ. զնոյն դասակցութիւնսն ցուցանէ մեզ Տէր իւրոց պաշտաւնէիցն թուով...:

74. ծբ. 254ա. Եր. Եպիփանու արքեպիսկոպոսի Կիպրացւոյ ասացեալ Գովեստ սրբոյ Խաչին: Խաչիս Քրիստոսի տաւնեսցուք. եւ լրումն եկեղեցեաց պայծառանայ...: Վջ. եւ զհոգիդ սուրբ զմխիթարիչդ. վասն զի ամենասուրբ Երրորդութեանդ...:

75. ծգ. 260բ. Սրբոյն Կիւրղի Երուսաղէմի հայրապետի ի Խաչն սուրբ եւ աստուածընկալ: Պարծանք սրբութեան եւ արդարութեան կաթուղիկէ եկեղեցւոյ այս են...: Վջ. եւ այնմ որ առաքեցաւ Տէրն եւ եկն ել ի խաչ վասն մեր...:

= Հրա. Կոչումն Ընծայութեան, էջ 234 եւ շար.:

76. ծդ. 262բ. Եր. Յովհ. Ոսկերերանի Կոստանդինուպաւլսի եպիսկոպոսի ի Խաչն աստուածընկալ: Մի ոք այսուհետեւ ամաւթ համարեսցի զպարկեշտ նշան փրկութեան մերոյ...: Վջ. Նոյնպէս եւ ի ձեռն փայտին փրկութիւն եղիցի...:

= Հրա. Migne, PG. 57, 841:

77. ծե. 265ա. Վկայութիւն սուրբ առաքելոյն Փիլիպպոսի որ վկայեաց յԵփեսոս քաղաքի: Մինչդեռ էին առաքեալքն Փիլիպպոս եւ Բարդողոմէոս եւ Մարիամ յԵփեսոս

© National Library of Armenia

քաղաքի...: Վ. եւ բանն Աստուծոյ անէր եւ բազմանայր. շնորհաւք...:

= Հրտ. Անկանոն գիրք առաքելականք, Վենետիկ 1904, էջ 300—320:

78. ծզ. 271ա. Յեկեղեցական Պատմութենէն վասն Փիլիպոսի առաքելոյ: Փիլիպպոս էր յԲեթից առաքելոցն...: Վ. անպատկառելի կացցուք յաջակողմանն որպէս կամարարք կամաց նորա եւ ժառանգեսցուք...:

= Եւսեբ. Եկեղ. Պատմ. Գ. 31, էջ 210—211:

79. ծէ. 273ա. Յաղագս Անդրէի առաքելոյ եւ նորին սքանչելեացն զոր Տէր եցոյց ի ձեռն նորա եւ Մատթէի ի Մարգակերաց աշխարհ: Յետ համբառնալոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յերկինս...: Վ. եւ առաքեալն արգել զնոսա...:

= Հրտ. Անկանոն գիրք առաքելականք, էջ 124—145:

80. ծը. 281ա. Ի յիշատակի սուրբ մարգարէին Դաւթի եւ Յակոբու առաքելոյ. յԱ. թագաւորութ.: Եւ զղջացաւ Տէր, զի թագաւորեցոյց զՍաւուղ ի վերայ Իսրայելի...: Վ. պատուեցաւ անուն նորա յոյժ:

= Ա. Թագ. ԺԵ. 35—ԺԸ. 30:

բ. Թղ. 286ա. Ի Դ. թագաւորութենից: Եւ արքայ Դաւիթ ծերացեալ էր...: Վ. ասէ ցնա Սողոմոն. երթ ի տուն քո:

= Գ. Թագ. Ա. 15—53:

81. ծթ. 288բ. Եր. Եւսեբի ժամանակագրի ասացեալ վասն Յակոբու որ անուանեցաւ Եղբայր Տեառն. յեկեղ. Պատմութենէն: Իսկ Հրեայքն ի ժամանակին իրրեւ կալաւ Պաւղոս բողոք ի կայսր...: Վ. այսպէս վկայեաց յԵրուսաղէմ առաջի Հրէից եւ Հեթանոսաց եւ եկեղեցւոյն Աստուծոյ...:

= Եւսեբ. Եկեղ. Պատմ. Բ. 23:

82. կ. 291ա. Ի յիշատակի սրբոյն Ստեփաննոսի նախավկայի: Երանելւոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացւոյ Ներբողեան ի սուրբ վկայն Քրիստոսի Ստեփաննոս: Ամենեքեան որք սիրելեացն ճաշս յաւրինեսցեն...: Վ. որպէս զի քահանայագործելով ի քում յիշատակի զկենդանի զմարմին եւ զանմահ արիւն կեցուցչին մերոյ Աստուծոյ հաղորդեալք...:

83. կա. 294ա. Եր. արքա Եփրեմի խորին ասորւոյ ի սուրբն Ստեփաննոս նախավկայն Քրիստոսի: Անդրանիկն մարտիրոսաց կոչեաց զիս...: Վ. աւրհնեալ Քրիստոս որ ետ նմա զաւրութիւն եւ յաղթութիւն...:

= Հրտ. Եփրեմ, Դ., 143—149:

84. կբ. 298ա. Գործք Պետրոսի եւ Պաւղոսի առաքելոցն Տեառն մերոյ, եթէ զիարդ ի Հռովմ կատարեցան: Եւ եղեւ յետ ելանելոյն Պաւղոսի ի Դոգոմէլիտացւոց կղզոյն՝ գալ նմա ի կողմանս Իտալացւոց...: Վ. եւ Պետրոսաւայ եւ Պոմտինտինա ի նորին ամսոյ ի յութն: Շնորհաւք...:

= Հրտ. Անկանոն գիրք առաքելականք, 1—29:

85. կգ. 309ա. Ի յիշատակի սրբոյց առաքելոցն Յովհաննու եւ Յակովբու: Եր. Եւսեբի յեկեղ. Պատմութենէն: Յամս Կղաւդեայ կայսեր ձեռնամուխ եղեւ Հերովդէս...: Վ. յորժամ զայցէ հատուցանել վարձս սրբոց իւրոց...:

= Եւս. Եկ. Պատմ. Բ. 9:

86. կդ. 312ա. Պատմութիւն յաղագս (սեսլեանն աստուածա)յին եւ յայտնութեանն որ ցուցաւ Յովհաննու ի Հոգւոյն սրբոյ եւ հանգիստ նորա: Յետ ժամանակաց ինչ առեալ զիս Յովհաննէս ելաք արտաքս...: Վ. խոնարհեալ համբուրեցաք զսուրբ դիրս նորա. եւ չոգաք ի քաղաքն փառաւորելով զՀայր...:

= Հրտ. Անկանոն գիրք առաքելականք, էջ 287—292:

87. կե. 314բ. Վկայաբանութիւն սուրբ Մանկանցն որք յԵփեսոս: Ամենայնի Տէրն եւ արարիչն եւ խնամողն, որ զիտէ զվերջինսն եւ զառաջինսն...: Վ. որ առնէ սքանչելիս ի ձեռն սրբոց իւրոց. զի նմա վայելէ...:

= Հրտ. Վարք եւ Վկայաբ. Ա. 491—502:

88. կզ. 325բ. Պատմութիւն սրբոյ առաքելոյն եւ աւետարանչին Մատթէոսի: Մինչդեռ առաքեալն Մատթէոս ի լերինն էր բոկ...: Վ. Եւ այժմ է ողջ մարմին նորա ի Կոստանդինուպալիս ընդ այլ առաքեալսն...:

= Հրտ. Անկանոն գիրք առաքելականք, էջ 437—448:

89. կթ. 330բ. Պատմութիւն սրբոյն Յակոբայ Մծբնայ եպիսկոպոսին, զոր գրեաց Մեղիգեայ աշակերտ Մարուգէի միայնակեցի: Մովսէս աստուածային աբէլնգիրն, որ եհերձ զիսորս ծովուն եւ եհան զժողովուրդն յանապատ յանջրդի..., Վ. եւ ես յայլոց սրբոց պատմութիւնս ընթացայ...:

= Հրտ. Վարք եւ Վկայաբ. Բ. 83—107:

Մասն Բ. Յայսմաւուրք:

90. ի. 345ա. Վարք երանելւոյն Սիմոնի Սինակեցի որ Մանդրայն Հալպ: Երանելին Սիմոն էր ի քաղաքէն Անտիոքայ Ասորւոց ի ժամանակս բարեպաշտ արքային Լեւոնի...: Վ. Եւ ննջեաց երանելին յամսեանն Սեպտեմբերի ի մինն յաւուր տարեմտի:

Հրտ. Վարք Հարանց Ա. 324—326: Յայսմաւուրք Վիեննայի Թ. 7, 44ա (Յ. 28):

91. իա. 346բ—347բ. Վկայաբանութիւն սրբոյն Մամասայ զոր յիշատակէ սուրբն Գրիգոր Աստուածաբան ի Նոր Կիրակէի ճառին: Յամս Աւրելիանոսի ամպարիշտ արքայի...: Թ. 7, 46ա:

բ. Թղ. 348ա. Յայսմ աւուր յիշատակ է եր. Յովհաննու կ. Պաւլի հայրապետի պահեցողի: Սուրբ հայրապետն Յովհաննէս յաղագս բազում ճգնութեանց իւրոց... (քանի մը տող):

92. իբ. 348ա. Վկայաբ. Ս. Անթիմոսի Նիկոմեդացւոց եպիսկոպոսի (Թ. 7, 47բ):

93. իգ. 348բ. Վկայաբ. Ս. Բարեղայ Անտիոքայ հայրապետի եւ վկայի (Թ. 7, 48ա):

94. իդ. 349ա. Վկայութիւն Սրբուհոյ եւ կոյս վկային Երմոնեայ (Թ. 7, 50ա):

95. իե. 350ա. Աստուածածնին. ծննդեանն ամենաւրհնեալ կուսին ի ծնողայ իւրոց ի Յովակիմայ եւ Յաննայէ. ի Պատմութենէ Ս. Յակոբայ եղբաւրն Տեառն (Թ. 7, 51բ):

96. Թզ. 352ա. Վկայութիւն սրբուհոյ վկային Մանուշակայ զոր ի հոռոմ լեզու Իա՛ կոչեն (Թ. 7, 56բ):

97. 353ա. Յիշատակ է ապաինոյն Աստուծոյ Թեոդորայ (Թ. 7, 57ա):

98. իէ. 357ա. Վկայութիւն Ս. Եւստաթիոսի եւ ամուսնոյ իւրոյ Թէոպիստեայ եւն (Թ. 7, 85ա):

99. իը. 359բ. Վկայութիւն կոյս նախավկային Ս. Թեկղի (Թ. 7, 90ա):

100. իթ. 362բ. Վկայութիւն Ս. Կալիստրատոսի եւ ընկերացն իւրոց (Թ. 7, 94ա):

101. ա. 364ա. Վարք եւ վկայութիւն երջանիկ հաւրն մերոյ Ս. Բարլաամի (Թ. 7, 96բ):

102. աա. 365ա. Վկայաբ. Ս. Անանիայի առաքելոյ Դամասկացւոյ (Թ. 7, 99ա):

103. աբ. 366ա. Վկայութիւն Կիպրիանոսի եպիսկոպոսի եւ Յուստինեայ կուսի (Թ. 7, 99բ):

104. ագ. 367բ—379ա. Կիպրիանոսի ապաշխարութիւն: Որք Քրիստոսի խորհրդովքն յառաջ գայցէ ձերոյն արտասուաւք...: Վ. Նա փրկեաց զիս ի մահուանէ: Այլ Աստուծոյ Հաւր եւ միածնի Որդւոյ նորա...:

= Յայն ընդարձակը՝ Acta Sanctorum Septembris VII, 222—241 (BHG. 453).

105. ադ. 379ա. Վկայաբ. սրբոյ առաքելոյն Թովմայ յերկոտասանիցն (Թ. 7, 107ա):

106. աե. 379բ. Վկայութիւն սրբոյց վկայիցն Մ(Տ)արգոսի եւ Անդրոնիկոսի որ ի Մեծքարն: Սուրբ Մարտիրոսքս պսակիկ... (Թ. 7, 114ա):

107. ազ. 379բ. Վկայութիւն Ս. Խուսանթոսի որ թարգման(ի) Ոկտեծադիկ եւ ամուսնոյն իւրոյ սրբուհոյն Դարեհի (Թ. 7, 124բ):

108. աէ. 383ա. Վկայութիւն Ս. Խարեթայ եւ սրբոց ընդ նմա (Թ. 7, 130ա):

109. աը. 385ա. Վարք եր. Իլարիոնի (Թ. 7, 132ա):

110. աթ. 387ա. Վարք եր. Արքեպիսկոպոսի Յերապոլեայ եպիսկոպոսի (Թ. 7, 133բ):

111. ժ. 389բ. Պատմութիւն անարծաթ բժշկացն Կոզմայայ եւ Դամիանոսի (Թ. 7, 148բ):

112. ժա. 391բ. Վարք սուրբ հայրապետացն Կ. Պ.ի Մեթոդիանոսի, Ղազքանդրի եւ Պաւղոսի խոստովանողի (Թ. 7, 155բ):

113. ժբ. 393ա. Տան է սուրբ եւ փառաւորեալ հրեշտակապետացն Միքայէլի եւ Գաբրիէլի եւ ամենայն երկնային զաւրացն. ի ճառէն Պանտալէոնի վասն տաւնի մեծի հրեշտակապետացն (Թ. 7, 165բ):

114. ժգ. 396ա. Վկայութիւն Ս. Մինասայ Եգիպտացւոյ (Թ. 7, 165ա):

115. Թզ. 396ա. Յիշատակ եր. Յովհաննու Ազքանդրու հայրապետին Ողորմածին (Թ. 7, 105բ):

116. ժդ. 398ա. Պատմութիւն սեառն Յովհաննու Ոսկերբերանի (Թ. 7, 168բ):

117. ժե. 400բ. Վկայաբ. սրբոց խոստովանողացն Գուրիասայ, Սամոնասայ (եւ) Աբիբա սարկաւագի (Թ. 7, 173ա):

118. ժզ. 401բ. Սքանչելագործութիւնք սրբոց խոստովանողացն Գուրիասայ, Սամոնասայ եւ Աբիբա Սարկաւագի. որ եղեւ յաւուրս բարեպաշտ թագաւորին Թէոդոսի: Յորժամ առաքեցան զարք յերկրէ հեռաստանէ ի պահպանութիւն քաղաքին Եդեսայ... (Թ. 7, 174ա):

119. ժէ. 403ա. Վարք երանելւոյն Գրիգորի Սքանչելագործի զոր գրեաց սուրբն Գրիգոր Նիւսացին եղբայր Բարսղի (Թ. 7, 178ա):

120. ժը. 406ա. Վարք երանելւոյն Գրիգորի Ակռականղացւոց եպիսկոպոսի (Թ. 7, 186բ):

121. ժթ. 414ա. Վկայաբ. սրբոյն Կղեմայ Հռովմայ հայրապետի (Թ. 7, 194բ):

122. ի. 415ա. Վկայաբ. Ս. Բազարաայ Տոռոմենոյ եպիսկոպոսի եւ լուսաւորչի (Թ. 7, 557ա):

123. իա. 423ա. Վարք եր. Նիկողայոսի Միւռնայ Լիկացւոց եպիսկոպոսի (Թ. 7, 216ա):

124. իբ. 425ա. Վարք եր. Ամբրոսիոսի եպիսկոպոսի Միղիողա քաղաքի յարեւմուտս (Թ. 7, 218ա):

125. իգ. 428բ. Վկայութիւն սրբոց վկայիցն Մինասայ, Երմոգենի, Եւդոքսիոսի (Թ. 7, 224բ):

126. իդ. 430ա. Պատմութիւն սքանչելեաց երանելւոյն Սփիւռիդոնի եպիսկոպոսին Մրմինթեու քաղաքին ի Կիպրոս (Թ. 7, 229ա):

127. իե. 431ա. Վկայաբ. սրբոց վկայիցն Եւստաթիոսի, Աւքսենտի, Եւգենիոսի, Ովրեստի եւ Մարկարիոսի (Թ. 7, 231բ):

128. իզ. 434բ. Վկայաբ. Ս. Փիլիմոնի փոքարի եւ Ապղոնիի զրկարդացի Եարիանոսի դատաւորին (Թ. 7, 247բ):

129. իէ. 437ա. Յիշատակ Դանիէլի եւ երից մանկանցն Անանիա, Ազարիա եւ Միսայելի եւ պատմութիւն վկայական մահու նոցա (Թ. 7, 239բ):

130. իը. 438ա. Վկայաբ. Ս. Իգնատիոսի Անտիոքայ հայրապետի (Թ. 7, 252ա):

131. իթ. 439ա. Վկայութիւն երկուց Բիւրուցն, որք ի Նիկոմիդայ հրով կատարեցան ի մեծ եկեղեցին (Թ. 7, 257բ):

© National Library of Armenia

132. ճժ. 440ա. Վկայութիւն Դոմնայի կուսի եւ Ինդէսի ներքինոյ (Թ. 7, 279ա):

133. ճժա. 441ա. Վարք եր. Սեղրեսարոսի Հռոմայ հայրապետի (Թ. 7, 293ա):

134. ճժբ. 442ա. Վարք երանելւոյն Յովհաննու որ վասն Քրիստոսի աղքատացաւ (Թ. 7, 329բ):

135. ճժգ. 444ա. Ճգնութիւն եւ վկայութիւն սրբուհի կուսին Եւդիկեայ կուսին (Թ. 7, 341ա):

136. ճժդ. 446ա. Ցիշատակ հայրապետացն Ակիքսանդրու Աթանասի եւ Կիւրղի (Թ. 7, 340բ):

137. ճժե. 446բ. Վկայաբ. կոյս վկային Եփրասիայ (Թ. 7, 343ա):

138. ճժզ. 447բ. Վկայութիւն չորից զինուորացն Բասոսի, Եւսերիոսի, Եւտիքեայ եւ Բասիլիդի (Թ. 7, 343բ):

139. ճժէ. 448բ. Պատմութիւն Գրիգորի Աստուածարանի Նանձիանձու եպիսկոպոսի (Թ. 7, 353ա):

140. ճժը. 451ա. Վարք եր. Եփրեմի Խորին Ասորւոյ (Թ. 7, 359ա):

141. ճժթ. 452բ. Վկայաբ. Ս. Վլասայ Սեբաստիայ եպիսկոպոսի (Թ. 7, 377ա):

142. ճի. 453բ. Վարք եր. Մարիամայ որ Մարիանոն անուանեցաւ (Թ. 7, 378ա):

143. ճիա. 455բ. Վարք եր. Մարաւնիանոսի կրանաւորի (Թ. 7, 380ա):

144. ճիբ. 458բ. Վկայաբ. Ս. Պաւղիկարպոսի եպիսկոպոսի (Թ. 7, 396բ):

145. ճիգ. 459բ. Վկայաբ. Ս. Կոնոնոսի Սաւրացւոյն (Թ. 7, 407ա):

146. ճիդ. 461բ. Վկայաբ. սուրբ եւ փառաւորեալ եւ սքանչելագործ վկային Քրիստոսի Դեմետրիոսի: Արդ ի ժամանակին յորում չարաչար եւ անաստուած Թագաւորն Մաքիմիանոս...: Վշ. որ եւ մինչեւ ցայսաւր բազում սքանչելիք լինին...:

147. ճիե—ճիէ. 464ա—473ա. Վասն սքանչելեացն որ ի ձեռն սրբոյն Դեմետրի եւ թէ որպէս եղեւ խնդիր նշխարաց նորա յաւուրս Յուստինոսի եւ Մաւրիկիոսի թագաւորի Յունաց: Եկեսցուք արդ, ով սիրելիք...: Վշ. եւ ընդ նոսին յարգուարձ բերկրանաւք փառաւորեսցուք...:

= Հրա. Վարք եւ Վկ. Սրբոց, Ա., 332—349:

148. ճիբ. 473ա. Վարք աղախնայն Աստուծոյ Եփրոսինեայ (Թ. 7, 411ա):

149. ճիբ. 476ա. Վարք եր. Գրիգորի Հռովմայ հայրապետի (Թ. 7, 417բ):

150. ճլ. 477բ. Վարք եր. Ալէքսիոսի մարդոյն Աստուծոյ (Թ. 7, 422ա):

151. ճլա. 479ա. Վկայաբ. Ս. Մարկոսի Արեթուսայ եպիսկոպոսի եւ Կիւրղի սարկաւագի եւն (Թ. 7, 429բ):

152. ճլբ. 480բ. Վկայութիւն Արդայ եպիսկոպոսին եւ Որմզդանայ եւ Սայենի եւ Բենիամէնի սարկ. որ ի Պարսս կատարեցան (Թ. 7, 431ա):

153. ճլգ. 482բ. Վկայաբ. սրբուհոյ եւ կոյս վկային Կատերինեայ (Թ. 7: 439բ):

154. ճլդ. 485ա. Վարք Մարիամայ Եգիպտուհւոյն (Թ. 7, 441ա):

155. ճլե. 488ա. Վարք եր. Թէոդորոսի Սիկեացւոյն (Թ. 7, 465ա):

156. ճլզ. 490բ. Վկայաբ. մեծ վկային Քրիստոսի Ս. Գէորգեայ (Թ. 7, 467բ):

157. ճլէ. 492բ. Վարք եր. Պաքմուտիոսի անապատականին: Այս երանելիս Պաքմիոս եպիսկոպոսի էր ի ներքին Թեբայիդայ... (Թ. 10, 434բ):

158. ճլը. 493բ. Վկայութիւն սրբուհոյ... Երինեայ (Թ. 7, 480ա):

159. ճլթ. 496բ. Պատմութիւն վկայիցն Քրիստոսի Ռոմանոսի եւ Դաւթի, որք յԱռուք նահատակեցան յանաւրէն եղբաւրէն իւրեանց (Թ. 7, 483ա):

160. ճլժ. 499բ. Վկայութիւն սուրբ եպիսկոպոսին Ընկլիկայ Թովմասու (Թ. 7, 281ա):

161. ճլժա. 501բ. Վկայաբ. սրբոյն Քրիստափորի եւ երկու կանանցն՝ Կալինիկեայ եւ Սկիլինեայ եւ այլ գաւր. (Թ. 7, 489բ):

162. ճլժբ. 503ա. Վարք եր. Եպիփանու եպիսկոպոսապետին Կոստանդեայ Կիպրոս կղզւոյն (Թ. 7, 493ա):

163. ճլժգ. 505բ. Վկայաբ. սրբոյն Թալէլայ բժշկին (Թ. 7, 507ա):

164. ճլժդ. 506բ. Վարք եր. Ոնոփրիոսի անապատականի (Թ. 7, 526ա):

165. ճլժե. 507բ. Ցիշատակ Կիւրակէի եւ Պարասկեւի (Թ. 7, 529բ):

166. ճլժզ. 509բ. Վկայաբ. սրբոյն Կիւրակոսի եւ մաւր նորա Ց(ու)զիանայ (Թ. 7, 563ա):

167. ճլժէ. 510բ. Վկայաբ. Ս. Աթանագինեայ եպիսկոպոսի Պիտաքայի եւ Ժ. աշակերտացն (Թ. 7, 564բ):

168. ճլժը. 511բ. Վկայաբ. սուրբ եւ փառաւորեալ վրէպ բժշկին եւ Քրիստոսի վկային Պանտալեոնի, զոր մկրտեաց Երմոդայոս քահանայ (Թ. 7, 574ա):

169. ճլժթ. 512բ. Վարք եր. Տիտոսի առաքելոյ եպիսկոպոսին Գորտինեայ քաղաքին ի Կրետէս կղզւոջ (Թ. 7, 579ա):

170. ճմ. 514ա. Վկայաբ. սրբոյն Սոփեայ եւ երից դստերայ նորա (Թ. 7, 584բ):

171. ճմա. 515բ. Վկայութիւն Աղբիանոսի եւ կնոջ նորա Անատալեայ եւ այլ Իգ. մարտիրոսաց (Թ. 7, 36ա):

172. ճմբ. 517բ. Վկայաբ. սուրբ եւ առաքելուհի կուսին Հռիփսիմեայ եւ ընկերաց նորա (Թ. 7, 104բ):

173. ճմգ. 519բ. Վկայաբ. սրբուհոյն Գայիանեայ եւ երկուց ընկերաց: Յետ կատարման կուսին սրբոյն Հռիփսիմեայ...:

174. ճմդ. 520ա. Վկայաբ. սրբոյն Ատոմայ եւ ընկերաց նորա: Թագաւորն Պարսից Յազկերտ խորհրդակցութեամբ... (Հմմտ. Թ. 10, 1բ. սյլապ Թ. 7, 27բ):

175. ճմե. 521ա. Վկայութիւն սրբոյն Վարդանայ զաւրավարի Հայոց եւ զաւրաց նորա որք կատարեցան ի մեծ պատերազմին (Թ. 7, 586ա):

176. ճմզ. 523ա. Վկայութիւն սրբուհոյ եւ կոյս վկային Վարվառեայ (Թ. 7, 87բ):

177. Թղ. 525ա. Վաղերիոս պատրիկիոս իշխան քաղաքին Պորտոսի էր անյաղ պատնէիկ... (Թ. 7, 92բ):

178. Թղ. 525բ. Պատմեաց մի ոմն յանապատականացն վասն առն մեծատան թէ հիւանդացաւ ծանր... (Թ. 7, 127բ):

179. Թղ. 526ա. Մի ոմն ի ծերոցն գնաց ի քաղաքն... (Թ. 7, 113բ):

180. Թղ. 526ա. Քուրմ կոյս գնաց յանապատն առ մխայնակեացսն... (Թ. 7, 95բ):

181. Թղ. 526բ. Հայրն Մակար երբեք ոչ ժպտեցաւ ամենեւին...:

182. ճնբ. 526բ. Վարք աղախնայն Աստուծոյ Տայիսայ (Թ. 7, 537բ):

183. Թղ. 528ա. Վասն Ներքինայն: Էր ոմն ի ներքսագոյն անապատն... (Թ. 7, 589ա):

184. Թղ. 529ա. Մարաի Ա. Յորժամ կոպաչարն հալածէին զքրիստոնեայսն՝ Մամիումայ քաղաքին եպիսկոպոսն... (Թ. 10, 339բ):

185. Թղ. 530ա. Եպիսկոպոս մի ի քաղաքացն Եղիպտոսի չնայր ընդ կին մի հրեայ... (Թ. 7, 121ա):

186. Թղ. 531ա. Քահանայ մի յեպիսկոպոսէն իւրմէ կոպեցաւ ընդ բանիւ... (Թ. 7, 140ա):

187. Թղ. 531բ. Ի սահմանս Երուսաղէմի ի ձոր մի մեծ եւ խոր, յորում էին վասն ճգնաւորս կրաւնաւորաց...:

188. ճկ. 534ա—549բ. Երանելւոյն Հիպոդիտոսի եպիսկոպոսի եւ վկայի վասն կատարածի աշխարհի եւ վասն Նեռին եւ յերկրորդ գալուստն մերոյ: Քանզի երանելի մարգարէքն աչք մեր եղեն եւ զգաղտնիս անյայտնութեան մեզ յայտնեցին...: Վշ. ի վերայ բազմաց կացուցից զքեզ, մուտ յուրախութիւն Տեառն քոյ: Որոց լեցի ամենեցուն մեզ հասանել... (Թղ. 548 եւ 549 չատ ՀԱՍՈՒԱԾ եւ վարէն 1—2 տող կորուած, ինչպէս նաեւ Բ. սիւնակի եզերքէն):

Գլխաւոր Ցիշատակարանը ինկած է:

ՑԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

1. Թղ. 7բ. Տիրամարն բարեխաւսութեամբ ողորմեսցի Քրիստոս Աստուած ստացողի տառիս Մշկոցի ստացողի տառիս եւ ծնողաց իւրոց. ամէն:

2. Թղ. 15բ. Ողորմեսցի Քրիստոս Աստուած ստացողի տառիս Մշկոցի եւ ծնողաց իւրոց. եւ ամենամեզ գրչիս Ստեփ. եւ ծնողացն իմոց եւ ընթերցողացդ եւ լսողաց. ամէն: (Նմաններ՝ 18բ, 22բ):

3. Թղ. 25բ. Զարժանին բարեաց յիշատակի գայրի աղախին Մշկոց եւ զծնաւղսն իւր աղաչեմ յիշել ի Տէր...:

4. Թղ. 60ա. «...Եւ անիմաստ գրչիս Ստեփանոսի եւ եղբաւրորդւոյ իմոյ Հանէսի կոկոզի թղթիս...:

5. Թղ. 181բ. Ամենառատ եւ բարերար Տէրն... ողորմութիւն չնորհեսցէ ստացողի տառիս Մշկոցի եւ ծնողաց իւրոց. ընդ սոցին եւ այլ քահանայից եւ տանուտերաց առ հասարակ մեծի եւ փոքր. երեւելի գեղջն Սիլիծի. եւ մեղապարտ գրչիս. ամէն:

6. Թղ. 291ա. «...Մշկոցի եւ առն իւրում Մեխայլի...:

7. Թղ. 13ա—բ (Նորոգողէն). Զանպիտան գրիչս եւ ըզծնաւղսն մեր եւ զտէր Լիվոն աւագիրէց զիմ վարդապետս եւ զտէր Մխիթար արեղայն ի էջմիածնէ եւ զԳր. սուտանուն յիրէց որ անուան միով եւ ի գործոց դատակ. վասն զի ես գիր յիսկիկայ չի գրեցի եւ վասն իմ փափականացն գրեցի եւ վասն խոչորութեան գրոց մի մեղադրէք. յիշեսջիք զմեզ ի Քրիստոս. զի եւ զուք յիշեալ լիջիք ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

8. Թղ. 1ա. |||| Խաչատուր ||| սոսկ (°) եղեալ (Բակ կարդացած է. Ղուկաս [°]) վարդապետս հրամանաւ Խաչատուր կաթողիկոսին յղեալ եկաք ի Կիպրոս ի մայրաքաղաքն Լաւքաչայ յաղագս հասի եւ իրաւանց սուրբ աթոռոյն. եւ ես չունէի կամք վասն ահի ծովու եւ յերկիւղի անիծեալ ժժմակեր եւ գիշակեր ազգին Ֆռանկաց: Յորժամ նաւեցաք ի Տարսոնա ի գարուն աւուր ճանապարհ ի մէջ ծովու ի սահմանս Սելեւկիոյ, եկն դալիեօն մի մէծ ի վերայ մեր, զոր ինչ որ կայր ի նաւն եւ ունէաք ի հօրէ եւ ի մօրէ գրեանք եւ այլ քսուր՝ մերկ ի մօրէ արարին զմեզ անողորմ ազգն անիծեալ Լատինացւոց: Աստուած կործանեսցէ թագաւորութիւն նոցա վաղվաղակի. ով որ տեսցէ եւ կարդացէ, ասասցէ ամէն եւ եղիցի: Թ(ղ) անչափ զաստ՝ եղեւ մեզ անամէջս, իսկ յորժամ եկաք ի ծոց նաւահանգիստն Ղարբազանա՝ աստ մինչի Լաւքուչայ բոկոտն եւ գլուխ բաց մերկանդամ ամենայնիւ, մինչ հատատեալ ազգն մէր Հայոց որ եւ նոյնժամայն ի տէսանէլն զմէզ այսօր(ինակ) Աստուծոյ օծեալ քահանայն տէր Ստեփաննոս նոյնժամայն զգեցոյց զմեզ եւ ծածկեաց զմերկութիւն վասն աւտարանի բանին, թէ Մերկ էի եւ զգեցուցէք զիս եւ այ(լ)ն: Որ նորոգողն եւ զգեցուցողն ամենայնի Քրիստոս՝ զգեստաւորեալ պայծառացուսցէ լուսոփ անմահիւ զինքն եւ իւրքն ամենայն փոխեցեալն եւ մնացեալն ի յարկան յաւիտենից յանդրաւ յուրախութիւնն, յերկիրն կենդանեաց ի դասս անդրանկաց. ամէն: Աստուած զիւր որդիքն պահէ բազմերամ ժամանակօք: Գրեցաւ յուլիս Բ. յաւուր երկուշաբաթի, սուրբ Լուսաւորչի պահոցն, ի դուռն սուրբ Աստուածածնին. (որք) յիշենն՝ յիշեալք լիջին ի Քրիստոսէ ի գալստ(եան) իւրում. ամէն:

© National Library of Armenia

Ցիշատակարանս առաջին անգամ հրատարակեց Բակուրան, էջ 109—110. ապէ՝ Բարգէն Ա. կաթողիկոս, Պատմ. կաթողիկոսաց Սսոյ, էջ 146—148: Գրութեան տարին չէ նշանակուած. Բարգէն կաթողիկոս կը համարի «1551—1571» տարիներէն:

Սիսի աթոռին վրայ կը յիշուին երեք համանուն կաթողիկոսներ.

Խաչատուր Ա. Զորիկ 1550—1560.
„ Բ. Զէյթունցի 1560—1584.
„ Գ. Մինասէրճի, 1657—1674:

Ցիշատակարանը գրուած է «յուլիս Բ. յաւուր երկուշաբթի սուրբ Լուսաւորչի պահոցն»: Ամսոյն օրը «Բ» դժուարընթեռնելի է. Բակուրան չէ կրցած կարդալ: Նկատի առնելով, որ Ս. Լուսաւորչի պահքը յուլիսի սկիզբը (1—4) կրնայ պատահիլ միայն այն տարիներուն, երբ Զատիկը կը հանդիպի ապրիլ 21—25ին, եւ այն 1550—1674 շրջանին միայն 1565, 1576, 1658, 1669 տարիներուն, իսկ յուլիս 2 երկուշաբթի միայն 1565ին, կրնանք Ցիշատակարանիս գրութեան տարին ստուգութեամբ ճշդել՝ 1565, յուլիս 2:

Կը յիշեմ այս տեղ առթիւս, որ Խաչատուր Գ. կաթողիկոս 1668ին գտնուած է Կիպրոս եւ ապէ կրնայ փոխադրած է Ս. Մամասի նշխարները, «տուեալ յընծայ Փրանկիսկոսի Մաւրոկենայ սպարապետի եւ դքսի Վենետկեցւոյ՝ տէր Խաչատուր կաթուղիկոս Սսոյ ի Կրետէ կղզւոջ, ի զալ առ նա յամի Տեառն 1668, ի Կիպրոսէ ընդ Գրիգորի քահանայի Կիրակոսենց Զմիւռնացւոյ. զորոյ եւ զայերէնագիր կնքոց եւ զստորագրութեանց ստուգութիւն՝ առ նախնեաւք մերովք եռուն յեղուլ ի լատին բարբառ աւանդապահք նշխարաց Սրբոյն». Հ. Մ. Ալպերեան, Լիակատար Վարք եւ Վկ. Սրբոց, հատոր Զ., էջ 19 եւ 24:

9. Թղ. 1ա. Թվին (Ռ)ՃԺԸ (1669) ապրէլ Գ. գատկին:

Թվին ՌՃԺԹ (1670) ես (Սը)սցի Օհան եպիսկոպոսն եկի նուիրակ Լօքօշա եւ էի առաջնորդ մայրաքաղաքին Մելտինու եւ Արմիստաճի (°). եւ իմ առաջնորդութեան սուտ քրիստոնեայ անուն Վարդան կասեն եւ է գլուխ (°) դատաւորաց խամազ եւ տ||| իրող. Ատուած անէ դատաստան ի |||||| ընդ նորայ. Կիպրոսի աթոռակալութեան Յովանէս եպիսկոպոսին եւ կաթողիկոսութեան Խաչատուրին. Կիպրոսի աթոռակալութեան Յովանէս եպիսկոպասին եւ կաթողիկոսութեան (տեառն) տէր Յակոբին |||||| եւ երեսփոխան մահտեսի Բաղրամին, որ է լաւ, ողորմած մարդ, Ատուած պահէ զիւր որդիք զԱկոբն, եւս ով որ կան ընդ իւրեանս. խիստ նեղութիւն կայ ի վերայ երկրի, որ ոչ գրեցաք վասն չճանճրանալոյ լսողացն. եթէ հոգեւոր եւ եթէ մարմնաւոր եւ խառնակութիւն առաջնորդաց մերոց որ դատարկացաւ վանորայքն եւ մնաց անմիաբան. զայն իմաստութեամբ իմանաք: Գրեցաւ ապրիլ ե. օրն Գչ.:

Զորս երկաթագիր Մագաղաթեայ Պահպանակներու բովանդակութիւնն է Յովհաննու Աւետարանի Դ. 39—Ե. 26: Կը նշանակեմ Զօհրապեան օրինակէն չեղումներն եւ իւրաքանչիւր թուղթին բովանդակութիւնը:

1. Յովհ. Դ. 39 գործեալ էր — 50 որդին քո: Ընթերցուածք. 42 փրկիչն. 47 բժշկեցէ. 48 ասէ ցնա Յիսուս. 49 թագաւորդնն:

2. Դ. 18 չէ քո այր — 28 եւ չո |||: Ընթերցուածք. 19 եթէ՝ 22 գիտեմք. 24 պարտ է հոգւով եւ ճշմարտութեամբ. 27 եւ յայնմ բան. 28 զսափոր իւր եւ չո(գաւ):

4. Դ. 50 կենդանի է — Ե. 7 յաւազանն: Ընթերցուածք՝ 51 եռուն նմա եւ ասեն. 53 տունն իւր. Ե. 2 բրո(պատի)կէ. համար 4 կը պակսի. 5. ամ է. 6 իրրեւ եռես զի անկեալ. 7 յուզեսցին արկցեն:

3. Ե. 18 զանձն Աստուծոյ — 26 եւ ետ: Ընթերցուածք. 19 եւ որդին նման նմին նման գործէ. 20 զնոյն |||. 20 զգործսն. 66 որդւոյ իւրում. 23 զորդին. 23 չպատուեա որդին ոչ պատուեա զհայր. 24 հաւատոյ յա |||: 25 զի զոյ ժամանակ. 25 լուիցենն կեցցեն. 26 նոյնպէս եւ ետ |||:

(Շարունակելի:) Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՈՍԿԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Անոնք որ առիթ ունեցած են թերթելու Պոլսոյ «Բուրսատան Մանկանց»ը, «Մասիս»ը, «Երկրագունտ»ը, «Պատկեր»ը, եւ այլն, հանդիպած են պարբերաբար երեւցող բանաստեղծական քնքուշ հոգիի մը — Կարապետ Ոսկեանի — առինքնող լարերուն, ուր ամենավսեմ հոգեկան զգածումներն ու սրտի թրթռացումները մարմին կը զգենուն կատարելագոյն արուեստով մը:

Անոնք որ Պոլսոյ Հայտար Փաշայի «Երկաթուղւոյ Ընկերութեան» եւ կամ նոյն Ընկերութեան հայ անդամներու կազմած «Հայ Պաշտօնեաներու Ազգօգուտ Միութեան» անդամ եղած են՝ գնահատած են ազգասիրական գործունէութիւնը Յարութիւն Ոսկեանի, որ ա՛յնքան Հայերու պաշտօն եւ գործ գտնելու պատճառ եղած է:

Ոսկեան անունը ոչ միայն սիրելի, այլ եւ յարգելի ու պատկառելի դարձուցած է սակայն Ոսկեան Գերդաստանի մեծագոյն դէմքը — Գրիգոր Ոսկեան — Մաքսատան Գրաքննիչի եւ Կրթական Նախարարութեան մէջ Ընդհանուր Քննիչի պետական պաշտօններով, որոնց մէջ իր միակ ուրախութիւնն եղած է ամէն կերպով օգտակար հանդիսանալ իր ցեղակիցներուն:

Գոհ ենք որ առիթ կը տրուի մեզ Հայ Կաթողիկէ Համայնքի մէկ փառքը կազմող Գերդաստանի մը հակիրճ պատմութիւնը ծանօթացնելու աւելի լայն շրջանակներու:

Ա. ԳԵՐԴԱՍՏԱՆԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՒ ԲՆԱԳԱՒԱՌԸ

Ոսկեան Գերդաստանի հայրենիքն եղած է Անատոլուի Կուտինա (Քէօթահիա) քաղաքը, ուսկից Գերդաստանի մէկ ճիւղը 1840ին Պոլիս փոխադրուած եւ հոն հաստատուած է:

Գերդաստանի ծագումի եւ անոր նախնիքներու մասին ստոյգ տուեալներ չունինք: Մեզի կը թուի թէ կրնանք սակայն առանց սխալելու Կուտինայի Կաթողիկէ Ոսկեաններու հնութիւնը գոնէ մինչեւ ԺԸ. դարու կէսերը բարձրացնել: Առ այդ մեր ունեցած կռուանն է՝ զոյութիւնը երկու կարեւոր դէմքերու, որոնք 1770ական թուականներուն Կուտինահայ կաթողիկէներու մէջ աչքառու դեր մը կը կատարեն եւ կը կոչուին «Եղբարք Ոսկեանք, Գէորգ եւ Պարոն Գրիգոր»:

Բարեբախտութիւն մըն է հաստատելը թէ ուսումնասէր Մխիթարեան մը՝ Հ. Պետրոս Շիւբիւրեանց, իր «Պատմութիւն քաղաքին Կուտինայի» Ձեռագիր գործին մէջ[1] պատմելով Կուտինահայոց ԺԸ. դարու կրօնական հալածանքը՝ առանձնապէս նաեւ քանի մը կարեւոր ծանօթութիւններ Կուտինայի Հայոց ներքին կեանքէն, որոնց մէջ նաեւ Ոսկեանց յիշատակութիւնը: Օգտուելով Շիւբիւրեանցի վերոյիշեալ գրութենէն՝ պիտի տանք համառօտ ակնարկ մը 1750—1790ի շրջանին Կուտինայի Հայոց վիճակի մասին, ուր պիտի տեսնենք նաեւ թէ ի՛նչ պարագաներու մէջ երեւան կու գայ, առաջին անգամ, Ոսկեանց անունը:

1760—1770ին Կուտինա հայաշատ քաղաք մը կը ներկայանայ, ուր կան Ս. Աստուածածին Մայր-եկեղեցիէն զատ՝ Վարի թաղի Ս. Մարգիս եւ Վերի թաղի Ս. Թէոդորոս եկեղեցիները: 1755ին համար իբր Առաջնորդ յիշատակուած Աբանաս վարդապետէն[2] վերջ քաղաքը երկար ատեն Առաջնորդ չէ ունեցած: «Ռամկախօս» ժողովուրդը զուրկ է ե՛ւ «բանին կենաց» քարոզէ ե՛ւ լոյս ու գիտութիւն ջամբող դպրոցէ:

Ահա այս միջոցներուն է որ Գաղատիոյ եւ Գարահիսարի վրայէն անցնելով Կարնէն Կուտինա կը հասնի Յովհաննէս Տէտէ անունով վարդապետ մը, ուսած Պոլիս՝ Պաղտասար Գալֆայի դպրոցը (Ձեռ., էջ 11): Յովհաննէս Վ. Կուտինա կը մտնէ 1766ին, դիմաւորուելով քաղաքին հայ քահանաներէն ու իշխաններէն, որոնք կ՝առաջնորդեն զինքը Ս. Սարգիս եկեղեցին: «Ապա սկսանի մեծաւ սիրով քարոզել եւ օգտակար բանիւք խրատել զժողովուրդն ի սէր աստուածային պատուիրանաց»: Շարաթ մ՝անցած՝ Յովհաննէս Վ. դպրոց կը բանայ, սկսելով նախ մէկ, յետոյ երկու, երեք, չորս... հարիւր եւ երկու հարիւր աշակերտով: Ուսուցման դիւրուսոյց մեթոտը սիրելի կը դարձնէ ուսումը եւ փոքրերու հետ մեծեր ալ խառնուած՝ կը կարդան ու կ՝օրինակեն «Կոտակարան», «Նարեկ», «Սաղմոս», «Քերական», եւ այլն: «Ի դուզնաքեայ ժամանակի, կը գրէ պատմիչը, մանկունք եւ աղջկունք Կուտինա քաղաքին եւ եւս մեծամեծ դպիրքն, այլ եւ ալեւոր մարդիկ

[1] Վիեննայի Մխիթարեան Մատենադարանի Ձեռագրաց բաժնի մէջ 518 թիւը կը կրէ այդ Ձեռագիրը: Փոքրադիր տետրակ մը՝ 49 էջով, նոտրդիր: Գրուած է ԺԸ. դարու վերջը կամ 1800ի սկիզբը:

[2] Բիւրակն, Կ. Պ. 1900, էջ 372:

© National Library of Armenia